

“ԹՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1894

ԹԻՒ 9

ՃՈՆ ՌԻՍԼԻ

Ճոն Ռիսլի, Մէթոտականութեան հիմնադիրը, տասնութերորդ դարուն ամենէն մեծ մարդոցմէ մին էր։ Տասնըինը անդամէ բաղկացեալ ընտանիքի մը կը վերաբերէր, և իր եղբայրներէն երկուքը եղան նմանապէս նշանաւոր — Մէմուէլ իբրև գրագէտ և Չարլս իբրև յորինող Անգղիերէն ամենէն քաղցր երգերէն շատերուն։ Իրենց հայրը Անկիլքան Եկեղեցւոյն մէջ քահանայ էր և ճոն մինչ դեռ վեց տարու էր հաղիւ հազ ազատեցաւ մահուանէ երկցատունը սյրած ատեն։ Օքսֆորտի համալսարանին մէջ դաստիարակուեցաւ, և հոն էր որ Մէթոտական անունը տրուեցաւ իրեն և իր ընկերներէն ոմանց, իրենց ջերմեռանդ և կանոնաւոր կրօնական կենցաղին համար։ Իրեն ասպարէզ ընտրեց Անկիլքան Եկեղեցւոյն քահանայութիւնը, սակայն իր ջերմեռանդութիւնը և զօրաւոր աւետարանական զգացումները հաճոյ չէին այդ Եկեղեցւոյն, ուստի իր հետևողներով անշատ մարմին մը կազմեց։ Այս իր նոր կենաց մէջ ցուցուց մեծ եռանդ և վարչական կարողութիւն։ Իր մեծ գործն էր աւետարանը քարոզել, մեծ մասամբ բաց օղի մէջ։ Իր քարոզութիւնն էր պարզ և խօսակցական, սակայն մեծ ազդեցութիւն կ'ունենար ունկնդիրներուն վրայ, և իր անկեղծ և բարեսիրտ դէմքը կ'աւելցնէր այս ազդեցութիւնը։ Կ'ըսուի թէ մէկ տարուան մէջ 800 քարոզ խօսած է, և իբր 40,000՝ իր կենաց մէջ։ Եւ սակայն գրեթէ միշտ քաջատոյջ էր, և մեռաւ 1791 ին, 88 տարեկան հասակին մէջ։

ՄԵՂՔԸ ԿԸ ՅԱՅՏՆԵ ԻՆՔՁԻՆՔ

Սոսկալի իրողութիւն մըն է թէ մեղքը չկրնար ծածկուիլ։ Մինչև անգամ երբ չարութիւն գործողը կը կարծէ



ՃՈՆ ՌԻՍԼԻ

թէ ամենէն աւելի ապահով է, իր գործած չարութիւնը կը մատնէ զնա նոյն խակ իր դէմքին միջոցաւ։ Երբեք գիտած էք թէ մեղքը ո՞րչափ կ'աւրէ մինչև անգամ մտորուս կերպարանքը։ Առնենք շատ գեղեցիկ պատանի մը, և թող հետզհետէ չարութիւն գործէ։ պիտի տեսնենք թէ որչափ որ չարուճակէ իր այդ զղուելի ընթացքը, այնչափ աւելի կը դրոշմուի հետզհետէ անոր մարդկային անկեղծ բնութիւնը իր երեսին և ամբողջ երևոյթիւն ու շարժումներն իրոյ — այս, աննշմարելի աստիճաններով, սակայն ահաւոր ստուգութեամբ և խորութեամբ։ Աչքերը, որ երբեմն շատ շինջ և անյողդողդ նայուածք ունէին, պիտի արատաւորուին կասկածով, ան-

վտահութեամբ և վախկոտ շարժումներով։ Անոնց ակնարկները ա՛յլ պիտի չըլլան խիտ տերևներու մէջէն արձակուող արևու ճաճանչներու պէս, այլ այնպիսի լրացութիւն մը պէս որ միայն մէկ կողմէն լուսաւորելով ճարտարութեամբ առդին անդին կը դարձնենք տեսնելու թէ ի՞նչ տեղի կ'ունենայ հոս և հոն, որ սակայն զայն բռնող մարդը չլուսաւորեր։ Եւ տարօրինակ գիծեր պիտի հիւսուին բերնին բողբոջներ։ Եւ շրթունքները, որ այնքան գեղեցիկ, այնքան անմեղուկ և այնքան վեհանձն էին, բռնի պիտի տգեղանան։ Եւ ձայնը, որ երբեմն այնքան անուշ, այնքան հնչուն էր, անբիծ և անվախ նկարագրի մը երգը, հեզնող ուրու մներ պիտի ստա-


նայ և փոխուի բիրտ ծիծաղի մը, մասամբ խարէական և մասամբ նախատալի : Այս բոլորը չեն պատահիր մէկ օրուան մէջ. և ասոր մէջ է վտանգը : Եթէ տարիներով պատանին չսեանես, պիտի սոսկաս երբ այդ ժամանակէն ետքը ի զուր փնտուես այն հրապուրիչ անկեղծութիւնը և չնորհալի շարժումը զորս անոր անուան հետ զուգորդած էիր : Չար մարդոց կրելիք պատիժին մէկ մասն է այս : Բորոտութեան բիծ մըն է ճակատի մը վրայ որ առաջէր այնքան պայծառ ու կնճիռներէ

բազմաթիւ նաւարեկութիւններ եղած են : Մակընթացութեան ամենէն աւելի բարձրացած ատեն ջուրերը հազիւ կը ծածկեն այս թումբը. և երբեմն հոսանքին սաստկութեան, երբեմն ալ մառախուղի ժամանակ որսալ հաշիւներու պատճառաւ նաւեր այս աւազէ թումբին վրայ կը նստին : Այս չէ այնքան ահաւոր որքան ժայռերուն վրայ քշուիլը, և սակայն երբ ծովը այնչեղ ետ է, ոչ մէկ նաւ կրնայ երկար աւան դիմանալ այիքներուն հարուածներուն : Երբ նաւը տատանի ջուրին

բաժնուած էր, և այնքան ճնշուած և տափակցած՝ որ կրցան աւազէն ոտքով խուռչաւոր զողը անցնիլ :

«ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻՄ»

Մի՛ բար այդպէս : Ամէն մարդ քիչ շատ ունի՛ ազդեցութիւն : Մարդ մը ճառախօսած ատեն ըսաւ . «Ամէն մարդկային էակ ազդեցութիւն ունի, մինչև անդամ սա մանկիկը,» ցուցնելով փոքրիկ ազնիկ մը որ հօրը բազկացը մէջ կը գտնուէր :



ԱՌԱՋՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

դերձ, և պիտի մեծնայ և տարածուի, մինչև որ դայն ունեցողին համար, ամենէն յարմար տեղը ըլլայ ըսիկ և դաժան անապատը :

ԱՌԱՋՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Գաղղիայէ Անգլիա երթալու ամենէն կարճ եղանակն է անցնիլ ֆալէ քաղաքէն դէպ ի Տոլլը քաղաքը, ուր նեղուցին լայնութիւնը 21 մըն է միայն : Տոլլըի հիւսիսային արևելեան կողմը, ութը մըն հեռի, կը գտնուի Տիլ կոչուած ծովեղերեայ քաղաքը : Այս քաղաքին դէմը ծովուն մէջ կ'երկնայ կուտուինի Աւազներ կոչուած հոչակաւոր բնական թումբը, որուն վրայ

երեսը, կը քշուի կը տարուի այիքներէն, կամ անոնց մէջէն ճամբայ կը բանայ սուր ցուռկովը . սակայն երբ աւազին վրայ դամուած մնայ, սոսկալի է այն ուժը որով այիքները կը զարնեն նաւուն, հարուած հարուածի ետեւ տալով անոր մինչև որ փշուռի : Պատկերին մէջի շողեհաւը կուտուինի Աւազներուն վրայ նստած է : Ութը տարի առաջ նորվեկեան նաւ մը խորտակեցաւ հոս . բոլոր նաւաստիները աւուրցան տարուեցան այիքներէն և միայն նաւագետը ազատուեցաւ : Ազատողները գտան թէ նաւին ամէն տախտակները բոլորովին նաւէն հանուած և անհետացած էին, և թէ նաւուն երկաթեայ դողը ճեղքուած և երկուքի

«Շիտակ է,» պոռայ մանկիկին հայրը : Եւ երբ ճառը աւարտեցաւ, ըսաւ ճառախօսին, «Ներքեք, Պարոն, անդէպ վարմունքիս համար, սակայն չէի կրնար չխօսիլ : Ատենօք գինեմը էի . սակայն որովհետև չէի ուզեր միայնակ երթալ գինեաուն, սովոր էի այս մանկիկը հետս տանիլ : Գիշեր մը երբ գինեաունին կը մօտենայի, ներսէն բարձր ձայն մը լսելով, ըսաւ, «Մի՛ երթար հոն, հայրիկ : Չայնդ կորէ՛,՝ զաւակ :» Վաղաչեմ, հայրիկ, մի՛ երթար : Չայնդ կորէ՛, ըսի : Շուտով զգացի որ արցունքի խոշոր կաթիլ մը սյտերէս վար կ'էլնայ : Քայլ մըն ալ չկրցայ առնել դէպ ի գինեաունը : Դարձայ տուն գացի, և ատկէ ի վեր,

փառք Աստուծոյ, երբեք գացած չեմ գինեատուն: Հիմա երջանիկ մարդ մըն եմ, և այս փորձիկ աղջիկը բրաւ այս բոլորը. և երբ ըսիր որ մինչև անգամ նա՛ ունի ազդեցութիւն, չէի կրնար չըսել, «Շիտակ է՛» Այո՛, ամէն մարդ ազդեցութիւն ունի:»


ՔԵՏԱՑԻՔ

Մին քանանացի ցեղերէն որք իսրայէլացիք գտան թէ կը տիրէին Աւետեաց երկրին, էին քեթացիք, կամ սեբուոնդը քեթի որ քանանի որդիներէն մին էր (Ծն. Ժ. 16): Եւստանակու հզոր ազգ մըն էին քեթացիք, որոց երկիրն էր գրեթէ այսօրուան Հայկաի կուսակալութիւնը: Իրենց մայրաքաղաքն էր քարթամիս՝ Եփրատի վայ, հիմակուան ճէրապուսը, որ Պիրէճիքի հարաւային կողմը կ'իջնայ վեց ժամ հեռի: Թէպէտ սովորաբար կը ներկայացուէին իբրև իսրայելի թշնամի ազգ, գոնէ երկու քեթացի՝ Դաւիթի ծառայութեան մէջ էին — Աբիմելէք (Ա. թագ. Ի. 2. 6) և Ուրիա (Բ. թագ. Ի. 9. 39): Քեթացիք կը յիշուին թէ՛ Ասորեստանեայց և թէ՛ Եգիպտացոց արձանագրութիւններուն մէջ: Ոխերիմ թշնամի էին մեծֆարաւոն Ռամսէս Բ. ի, իսրայէլացիները արձակել չուզող փառաւորին: Զօրաւոր էին պատերազմի կառքերու կողմանէ: Հոս գրուած պատկերը կը ներկայացնէ սոյն կառքերէն մին, և առնուած է Եգիպտական հնութենէ մը:

ԱՆԻԻ

Համայնագիտարաններու և նմանօրինակ գիրքերու մէջ ամենէն խնամոտ խուզարկութիւնները չեն կարող մեզ գիտցնել թէ ե՛րբ և ո՛ր մարդ առաջին անգամ գտաւ թէ բեռ տանելու աւելի դիւրին և արագ միջոց է զայն անհիւներու վրայ դնելով քաշել, քան գետնին վրայէն քաշել կամ ձեռքին մէջ և ուսին վրայ առնելով սանիլ: Սակայն զարմանալի է որ, թէ և անհիւն գիւտը այսչափ հին է, բազմաթիւ դարեր երբեք զարգացումներ չեղան անոր վրայ, զայն մեքենաներու կամ օգտակար նպասակներու գործածելով: Եգիպտացին, Ասորեստանցին, Հռոմայեցին և Յոյնը, ամէն մէկը ունէր իր պատերազմի կառքը, սակայն երբեք ծանօթութիւն չունէր այսօրուան մեր սիրուն և հեշտալի կառքերուն: Կառքեր, և ամէն մեքենայ որոց մէջ անհիւ կը գործածուի, մինչև դարուս սկիզբը մնացին

գրեթէ տարրական վիճակի մէջ: Մեքենական հնարքներու գրգռու տուող բանը եղած է չողեչարժ մեքենան, մարդուն ծառայ մը որուն զօրութիւնը անսահման է, և որ յոգեկի չգիտեր: Երբեք խորհած ես թէ ի՞նչ պիտի ըլլար աշխարհս առանց անհիւներու, եթէ չունենայինք ո՛չ ժամացոյց, ո՛չ կառք, ո՛չ չողեչառ, ո՛չ երկաթուղի: Անհիւն վերջին զարգացումն է հեծուակը, որմէ հարիւր հազարաւորներ կը գործածուին այսօր. և թէ և քանի մը յիմար տղայք անձերնին կը վնասեն չափազանց գործածելով զայն, սակայն հազարաւոր ժրջան մարդոց համար հեծելանիւն է միջոց մը որով կրնան ժամանակ և զօրութիւն շահիլ, ձի մը



ՊԱՏԵՐԱՅԻ ԿԱՌՔ

որ ուտելիք չուղեր, և կառք մը որ գրեթէ ինքիբնէն կ'երթայ:

ԽՆԼՔԻ ԳՈՐԾԻՒ ՏՈՒՐ

Մարդ աշխատողներուն ամենէն մեծ գոժուարութեանց մին է գտնել այնպիսի մարդիկ որ բոլոր խելքերնին իրենց գործին կու տան, շարունակ չեն խօսիր կամ դուրս նայիր կամ ջանար գտնել զիրենք և ուրիշները զբօսցնելու միջոց մը: Այսպէս ընողները կը թուի թէ չեն խորհիր որ ժամանակ վատնուը, բան մը չընելը, զիրենք աշխատողները գործատէրէն գողնալ է: Կը ճանչնամ մարդ մը որ միշտ բազմաթիւ մարդիկ կ'աշխատցնէ: Իր գրասենեակին մէջ ունի թերևս վեց եօթը աշխատաւորներ որոց մեծ մասը կին են: Դիտեց թէ անոնցմէ մին գրեթէ երբեք սխալ չընէր, մինչ միւսները իրենց սոմարակալութեան հա-

չիւներուն մէջ յոյժ սաէպ սխալներ կ'ընէին, և թանկագին ժամեր կը վատնէին այդ սխալները շտկելու համար: Ուտի սխալ մօտէն հսկել անոնց վրայ, տեսնելու թէ ի՞նչ է ասոր պատճառը: Միւսներուն սխալ ընելուն պատճառը չէր անոնց իրենց գործը չհասկնալը, որովհետև ճիշդ քիչ սխալ ընողին չափ լաւ կրնային ընել զայն: Քանի մը շարժք զանազան ձևով գիտելէ ետև համալուեցաւ որ տարբերութեան պատճառն էր սա. այն մարդը որ իր գործը լաւ կը կատարէր, ոչ միայն կատարելապէս կը հասկնար զայն, այլ նաև իր բոլոր խելքը միտքը անոր կու տար: Փոյթ չէր ընել թէ ո՛վ կանցնի իր քովէն, ի՞նչ կ'ըսուի կամ ի՞նչ կը դառնայ իր շուրջը. միտքը և աչքերը գործին վրայ յառած էր: Գոժուար չէ տեսնել թէ զինք աշխատողները կըրնար անոր վճարել միւսներուն վճարածէն շատ աւելի, ոչ միայն վասն զի մի և նոյն ժամանակին մէջ միւսներէն աւելի գործ կը հանէր, այլ վասն զի նաև շատ քիչ ժամանակ կը վատնէր սխալ շտկելու համար: Այս լաւ յատկութիւնը ունեցողը կամ չունեցողը յայտնի կ'ըլլայ նոյն խի փոքր հասակէն: Երբ տղայք առաջին անգամ դպրոց կ'երթան, դիւրաւ կը տեսնուի թէ ո՛վ խելքը իր գործին կու տայ և ո՛վ չտար: Ոմանք քանի մը վայրկեան կը կարդան, յետոյ կը մտածեն թէ ի՞նչպէս կրնան չարութիւն ընել կամ ուրիշներուն աւելապէս ճոխուած թուղթ մը կամ կախիկ կտոր մը կը նետեն մէկու մը, իրարու նամակ կը գրեն կամ կը սկսին փրփրասալ: Ուրիշներ, թերևս անոնցմէ նուազ ընդունակ սորվելու, ուշերնին միշտ իրենց գործին վրայ կը կեդրոնացնեն և յարատեւելով կը ջանան իրենց դասերը կատարելապէս լաւ սորվիլ: Ասոնք տպուշ կը կոչուին: Այո, շատ բաներու մէջ տպուշ են. սակայն բաւական խելք ունին վատահ ըլլալու թէ «Ոչխատութիւնը անշուշտ կը վարձատրուի», և յաճախ զայս գիտեն շատ աւելի քաջ քան իրենց աւելի պայծառ, աւելի արթուն ընկերները: Մի կարծեր թէ կ'ըսեմ որ բոլոր ժամանակը աշխատիս: Երբեք. այլ

կ'ըսեմ թէ երբ որ կ'աշխատես, աշխատե՛, և երբ որ կը խաղաս, խաղա՛: Եթէ ջանաս մի և նոյն ատեն երկուքն ալ ընել, ոչ մէկուն մէջ պիտի յաջողիս:

Նշանաւոր գործ չկրնար կատարուիլ առանց փութկտութեամբ խորհելու և սաստիկ աշխատելու: Այս կարողութիւնները ձեռք կը բերուին կենաց մէջ ամենափոքր գործերը խորհելով և սաստիկ աքնութեամբ կատարելով: Ինչալ ըլլայ գործդ, խորհէ թէ ի՞նչպէս կրնաս լաւ և արագ ընել զայն, եթէ մեքենայով կ'աշխատես, անոր մանրամասնութիւնները և գործելու սկզբունքները լաւ մը ուսումնասիրէ: Եթէ գրական գործով կը զբաղես, բոլոր փափաքդ ըլլայ կրցածիդ չափ շատ գործ արտադրել որչափ կարելի է քիչ ժամանակի մէջ: Կենանքդ ժամանակ է, և իրաւամբ բուռած է թէ, «ինչ որ ժամանակ կը շահեցնէ, կենանքը կ'երկարէ»:

ԿՐՑԱԾԻՒ ԶԱՓ ԼԱԻ ԸՐԷ

Ծերունի նկարիչ մը իրեն կանչեց իր դեռահաս աշակերտը և անոր պատուիրեց որ աւարտէ իր սկսած մէկ պատկերը զոր հետզհետէ աւելցող սկարուլթեան պատճառաւ ստիպուած էր կիսկատար թողուլ: «Տղաս», ըսաւ նա, «քեզ կը յանձնարարեմ որ բոլոր ուժդ տաս այս գործին: Կրցածիդ չափ լաւ ըրէ զայն»: Պատանին դժկամակութիւն կը ցուցնէր ձեռք դպցնել նկարի մը որ նախորդ գործուած էր իր վարպետին ձեռքով: «Կրցածիդ չափ լաւ ըրէ» էր ծերունիին հանդարտ պատասխանը, և երբ պատանին կը շարունակէր դժկամակութիւն ցուցնել, ծերունին միայն կը պատասխանէր, «Կրցածիդ չափ լաւ ըրէ»: Աշակերտը առաւ վրէձինը և պատկերակալին առջև ծընրադրելով աղօթեց: «Իմ սիրելի վարպետիս սիրոյն համար է որ ճարտարութիւն և կարողութիւն կը խնդրեմ այս գործը կատարելու»: Սկսաւ նկարել և ձեռքը երթալով աւելի վարժ և ճարտար եղաւ: Արուեստագէտի ոգին կը ճառագայթէր իր աչքերէն: Վախ և իր անձին վրայ անվստահութիւնու ծուլութիւնանհետացան, և նկարին վրայ վրձինի վերջին հարուածը սուսա խոնարհ և սակայն ուրախ վստահութեամբ մը: Երբ վարպետը արուեստանոցը մտաւ աւարտած պատկերին վրայ վճիռ արձակելու, աչքերը արցունքով լեցուցան իր աշակերտին այս գեղարուեստական յաղթանակը տեսնելով, և համբուրելով պատանին, դուչեց, «Տը-

ղաս, ես ա՛լ չեմ նկարեր»: Այսպէս դեռահաս Լէոնարտօ Տավինչի մտաւ նկարչութեան ասպարէզը, և յետագայ տարիներու մէջ արտադրեց իր մեծ նկարը, Տերտուչան Բոլբիլը, որ ամէն սարի իր սրբավայրին մէջ կը քաշէ գեղարուեստի հարիւրաւոր երկրպագուներ:

ՄԱՌԵՐՈՒՆ ԳԱԳԱԹԸ ԿՈՆՔԵՐ

Խումբ մը երկրաչափներ կէս օր մը Միացեալ Նահանգներուն Ֆլորիտա նահանգին մէկ անտառին մէջ կը հանգչէին, երբ անոնցմէ մին պոռաց, «Ամէն մէկ ումպ ջուրի համար պատրաստ եմ տալ 50 սէնթ (12 դ.հ.):» Այսպէս ընել պատրաստ էին նաև միւսները, վստահ ըլլալով որ շատ ծառաւ էին և մտտերը չկար աղբիւր կամ վտակ:

Իրեն մարդիկը այսպէս կը խօսէին, գլխաւոր երկրաչափը տեսաւ որ աղուաւ մը բարձր նոճիի մը կուշար աճող լայն, երկայն տերևներու կոյտի մը մէջ կը խոթէ կտուցը: Տերևները արաստովոր օդատունկի մը կը վերաբերէին: Կանաչ էին, իրենց յատակները ուռած, և կը ձևացնէին զվիվայր դարձած զանդակ մը: Փոքրագոյն ծայրը հաստատուած էր ծառին կեղևին շուրջը փաթթուող արմատներով: Օդատունկը, սնանկով օդով և ջրով զոր ստանալով անձրևէն կը պահէ իր մէջ, կ'ըլլայ տեսակ մը կոնք:

Գլխաւոր երկրաչափը ոտքի վրայ ցատկեց խնդալով, և ըսաւ, «Տըղաք, սա ծերուկ աղուաւր ամենէս խելացի է»: «Ի՞նչպէս», հարցուցին միւսները: «Ահա գիտէ թէ այս անտառին մէջ հարիւր հազար ջրով լեցուն կոնք կայ»: «Ի՞նչ», պոռացին ապշութեամբ:

Երկրաչափը օդատունկի մը երկուքի բաժնեց և անկէ խմեց գրեթէ կէս քաշ մաքուր պոզ ջուր: Ատկէ ետև մարդիկը ա՛լ չնեղուեցան ծարաւէ, վստահ անտառին մէջ ամէն ծառունէր գոնէ մէյմէկ օդատունկ, և գրեթէ ամէն մէկ օդատունկ կը պարունակէր ծարաւը գոհացնելու չափ ջուր:

ՔԱՆԻՑ ՏԱՐԵԿԱՆ ԵՆ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻ


Ժամանակաւ իմաստուն մարդ մը կար որ զարմանալի կերպով հետաքրքիր էր, կ'ըսէ յօդուածագիր մը «Ի՞նչ» եք: Փնէլ մէջ: Կեանք ունէր ամէն բան գիտնալ, և շարունակ ասոր անոր հարցումներ կ'ուղղէր: Արդարև իր գիտութեան ծարուր այնչափ մեծ էր որ որո՞ն որ պատահէր, կ'ուղէր անոր տարիքը գիտնալ: Սակայն, վերջին աստիճան քաղաքավար ըլլալով, կ'ուղէր որ վար-

պետութեամբ հասնի իր այս փափաքին:

Օր մը իր տունը եկաւ արևոր վարժապետ մը, որ գինք մեծապէս զրօսցուց: Իմաստունին ըսաւ շատ մը բաներ զորս նա առաջ երբեք չէր գիտեր, և իմաստունը մեծ հաճոյք զգաց: Սակայն վերջապէս խօսքին կարգը այնպէս բերաւ որ իմաստունը ուղեց վարժապետին տարիքը գիտնալ, ուստի խորհեցաւ իր փափաքը յաղեցնել աւնոր ներկայացնելով մաթեմատիկական խնդիր մը: «Պարոն», ըսաւ իմաստունը, «քեզի գործ մը պիտի տամ, մտաւոր թուարանութեան խնդիր մըն է: Խորհէ ծնած ամսոյդ թուոյն վրայ»: Արդ, վարժապետը վաթսուս տարեկան էր և ծնած էր Ծնունդէն երկու օր առաջ, ուստի տասներկու թիւին վրայ խորհեցաւ, Գեկտեմբեր ամիսը, որուն մէջ կը պատահէ ծնունդը, արուոյն տասներկուերորդ ամիսը ըլլալուն համար:

- «Շատ լաւ», ըսաւ վարժապետը: «Երկու քով բազմապատկէ», շարունակեց իմաստունը:
- «Բազմապատկեցի»:
- «Չինք գումարէ»:
- «Գումարեցի», պատասխանեց վարժապետը:
- «Չիմա յիտնուի բազմապատկէ»:
- «Բազմապատկեցի»:
- «Գումարէ տարիքդ»:
- «Գումարեցի»:
- «Հանէ 365»:
- «Հանեցի»:
- «Գումարէ 115»:
- «Գումարեցի»:
- «Չիմա», ըսաւ իմաստունը, «կըրնամ գիտնալ թէ ի՞նչ եղաւ արդիւնքը»: «Հազար երկու հարիւր վաթսուս», պատասխանեց վարժապետը հետաքրքրութեամբ: «Ծնորհակալ եմ» էր իմաստունին պատասխանը, «ուրեմն վաթսուս տարի առաջ, գեկտեմբեր ամսուն մէջ ծնար, այնպէս չէ»: «Ի՞նչպէս ալ գտար», պոռաց վարժապետը ապշութեամբ: «Երկ քու պատասխանէդ — 1260: Առային երկու թուանշանները կը ցուցնեն թէ տասներկուերորդ ամսուն ծնար, և վերջին երկու թուանշանները կը ցուցնեն տարիքդ»:

«Հա, հա, հա», խնդաց վարժապետը, «քանչեղ խելք, զայդ ի գործ պիտի դնեմ առաջին անձին վրայ որուն պատահիմ: Շատ քաղաքավար եղանակ մըն է մէկու մը տարիքը գիտնալ»: Եւ ամէն անգամուն ալ միշտ կը ստանար ուղիղ պատասխանը:

Ամերիկայի Միտինոբայ Ընկերութեան կողմէն
Արտօճատէր
Տնօրէն—Խմբագիր
Ֆինանսները Եղուող

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՆԵՐ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՏՊԱՐԱՆԻ